Ծառայություններ և գներ

Մեկ ժամի արժեքը սովորաբար 60 դոլար է, սակայն վճարը կարող է տարբերվել՝ կախված ծրագրի խտությունից և վերջնաժամկետից:

Խմբագրում / Սրբագրում

Մենք խմբագրում և սրբագրում ենք ցանկացած ծավալի APA, MLA, IEEE, կամ այլ ֆորմատի հոդվածներ:

Ձևավորում են նաև թեզեր կամ ատենախոսություններ Ձեր ուսումնական հաստատության ուղեցույցների հիման վրա:

TOEFL/ IELTS ուսուցում

Թեսթավորմանը պատրաստվելու համար, մենք կսահմանենք նպատակները, վերջնաժամկետները և նյութերը՝ կախված թեսթի բազմակի ընտրության, լսելու, խոսելու կամ գրելու բաղադրիչները յուրացնելու անհրաժեշտությունից:

Էսսե/Հետազոտություններ

Ձեզ դժվա՞ր է հասկանալ դասընթացը կամ դասախոսի պահանջները: Ձեզ անհրաժե՞շտ է ստանալ ամենաբարձր գնահատականը և զարգացնել գրելու հմտությունները: Դուք ունեք ուղեցույց/դասընթացի պահանջներ, բայց չգիտեք ինչպե՞ս իրականացնել դրանք:

Մենք կօգնենք Ձեզ տալ ճիշտ հարցեր և կառաջնորդենք Ձեզ գրելու և վերանայելու Ձեր աշխատանքը տարբեր փուլերով բարձր որակի հասնելու համար, անկախ օնլայն կամ դեմ առ դեմ ուսուցման Ձեր ընտրությունից:

Ատենախոսության / Թեզիս

Դուք նո՞ր եք սկսել աշխատել ատենախոսության վրա: Դուք անհանգի՞ստ եք ժամանակի մեջ տեղավորվելու հարցում: Ձեր մայրենի լեզուն անգլերենը չէ, բայց պաշտպանելու եք անգլիախոս երկրու՞մ:

Մենք կարող ենք օգնել Ձեզ կազմել հստակ ծրագիր ատենախոսության մշակման ամեն փուլի համար և օգնել Ձեզ խուսափել սխալներից, որոնք կարող են արժենալ ժամանակ և ծախս: Օգնելով Ձեզ այն ոլորտներում, որտեղ Ձեր դասախոսը ժամանակի կամ ցանկության պատճառով չի կարողանա Ձեզ օգնել, մենք կառաջնորդենք Ձեզ ավարտել ատենախոսությունը ժամանակին:

Գրականության ակնարկի ձևավորում

Շատ ուսանողներ սարսափում են գրականության վերանայման գործընթացից: Նրանք մտածում են, թե որ ոլորտը կամ որ ժամանակաշրջանը պետք է հայտնվի ուշադրության կենտրոնում առաջին հերթին: Նրանք մտածում են ինչպես սկսել և սահմանափակել գրականության վերանայումը մինչև վերջնաժամկետը:

Ձեր հետազոտության հետ կապված հարցերի, վարկածների և փոփոխականների հիման վրա, մենք կօգնենք Ձեզ սահմանափակել գրականության վերանայումը, մշակել ամփոփագիր Ձեր թեմայի հիման վրա և դասավորել Ձեր գաղափարները տրամաբանական հերթականությամբ:

Անկախ նրանից, թե Դուք գրում եք կարճ գրականության ակնարկ, թե ատենախոսության երկար գլուխ, մենք կարող ենք օգտակար լինել:

GRE (Միայն անգլերեն բաժինը)

Ունեք դժվարություն GRE-ում ճիշտ էսսե ձևավորելու խնդիր, կամ Դուք ունեք օգնության կարիք ընթեռցանության ըմբռման և բառապաշարի զարգացման հարցու՞մ:

GRE-ի իմ տոկոսային առավելությունը 97 է: (Գրառումը այստեղ): Ես կօգնեմ Ձեզ մշակել ծրագիր, որ կօգնի Ձեզ վաստակել այն գնահատականը, որի կարիքը Դուք ունեք: Սկզբում Դուք կանցնեք GRE թեսթային տարբերակը, և մենք կկարողանանք որոշել, թե թեսթի որ հատվածներին պետք է առավել ուշադրություն դարձնենք: Այնուհետև կմշակենք ծրագիր բարելավելու գնահատականը այդ հատվածներում, անկախ նրանից թե Ձեզ պետք կլինի մեծացնել ակադեմիական բառապաշարը կամ բարելավել էսսեների մշակումը կամ զարգացնել ընթերցման ըմբռման հմտությունները:

Ակադեմիական գիր

Երբևէ ճանապարհորդե՞լ եք մի երկիր չիմանալով այդ երկրի լեզուն: Զգացե՞լ եք Ձեզ անհարմար մշակույթային նորմերի պատճառով: Ունեցե՞լ եք խնդիրներ անելով կամ ասելով որևէ բան, որ ընդունվել է ինչպես անընդունելի կամ կոպիտ տեղացիների կողմից:

Ակադեմիական գիր. անկախ այն համգամանքից տեղացի եք, թե ոչ, կարող եք հայտնվել վերը նշված իրավիճակում: Այն ունի իր սեփական կանոնները և կոնվենցիաները, որոնք չհետևելու դեպքում, Ձեզ զգում եք օտարականի նման և կարող է վատ գնահատականի պատճառ հանդիսանալ կամ մերժվել հրապարակման համար:

Արդյունավետ գիրը տարբեր ժանրերում, տարբեր լսարաններում և գրավոր համատեքստում աշխատություններ մշակելու ունակությունն է:

Միասին աշխատելու արդյունքում, Դուք կսովորեք փոփոխության ենթարկել Ձեր գիրը տարբեր լսարանների և գրավոր նախագծերի համար: Ժամանակի ընթացքում, Դուք

կզարգացնեք Ձեր կարողությունը ձևավորելու ոճ և կարգ՝ համապատասխան իրավիճակների:

Հաջող հարցազրույց անցնելու դասընթացներ

Դուք ունեք լավ որակավորումներ, բայց դժվարանում եք ստանալ Ձեր երազած աշխատանքը, քանի որ Ձեզ չի հաջողվում անցնել հարցազրու՞յցը: Հարցերին պատասխանելիս ժամանակ առ ժամանակ կանգ եք առնում կամ հստակ չե՞ք խոսում:

Անկախ նրանից, Ձեզ պետք է սկզբնական մակարդակի աշխատանք, թե դասախոսական աշխատանք միջազգային աշխատանքային շուկայում, ինտենսիվ հարցազրույցների գործնական նիստերի միջոցով, մենք կարող ենք օգնել Ձեզ զարգացնել հակիրճ և կենտրոնացած պատասխաններ հարցազրույցների ժամանակ առավել հաճախ տրվող հարցերին, այնպես, որ Դուք կարողանաք հեշտությամբ և վստահությամբ անցնել հարցազրույցները:

Մենք օգնել ենք շատ հաճախորդների նախապատրաստվել և անցնել շատ մրցակցային աշխատանքային հարցազրույցներ խմբագրման, կրթության, մարկետինգի, մանրածախ ծառայությունների և այլ ոլորտներում: Մենք նաև իրականացրել ենք կարիերիայի խորհրդատվության և պլանավորման աշխատաժողովներ տարբեր քոլեջներում:

Ինքնակենսագրություն/Ռեզյումե և Մոտիվացիոն նամակ (Cover Letter)

Ձեզ անհրաժե՞շտ է դրական արձագանք Ձեր ինքնակենսագրությանը, ռեզյումեին կամ մոտիվացիոն նամակին: Ես կարող եմ ուսումնասիրել Ձեր հայտի նյութերը և օգնել Ձեզ կազմել թիրախային ռեզյումե կամ մոտիվացիոն նամակ կոնկրետ աշխատանքի դիմելու համար: Իմ վճարը շատ ավելի ցածր է, քան շատ օնլայն ռեզյումե կամ ինքնակենսագրություն վերանայող ընկերություններինը:

Ընդունելության Էսսեի խմբագրում և սրբագրում

Ձեր նախընտրած ուսումնական հաստատություն ընդունվելը կարող է լինել դժվար, եթե անգլրենը Ձեզ համար երկրորդ կամ օտար լեզու է: Մենք կարող ենք օգնել Ձեզ մշակել էսսե, ինքնակենսագրություն և հասարակական, հումանիտար ուսումնական հաստատություններ ընդունելության համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, որոնք Ձեզ կապահովեն մրցակցային առավելություն:

Ատենախոսության/Թեզի խմբագրում

Քանի որ գրառումները ծավալուն աշխատանքի մեջ շատ են և կարող են հանգեցնել բարդությունների, կարող ենք կազմակերպել Ձեր մտքերը: Մինչ ատենախոսության ղեկավարին ներկայացնելը կարող ենք օգնել խմբագրել ատենախոսության/թեզի գլուխները այնպես, որ լինեն պարզ և հասկանալի:

Ատենախոսության/Թեզի սրբագրում

Մենք կարող ենք սրբագրել և ձևափոխել Ձեր ատենախոսությունը՝ համապատասխան ուսումնական հաստատության պահանջների, այդ թվում MLA,APA,IEEE և այլ ձևաչափերով:

ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ՎԵՐԸ ՆՇՎԱԾՈՎ: ԵԹԵ ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ, ՈՐԸ ՆՇՎԱԾ ՉԷ ԱՅՍՏԵՂ, ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՄԵԶ :